ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2026 թվականի N 162

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Անահիտ Խաչիկի Ալոյան անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի գ. Ֆանտան 4-րդ փողոց թիվ 24 շինության տարածքում գտնվող 35,15քմ մակերեսով առևտրի օբյեկտում, ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N409/12 առ 2026 թվականի հունվարի 29-ի):
Հաշվի առնելով, որ ըստ N260129389747030 անդորրագրի դիմումատուն 2026 թվականի առաջին եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 95-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***Անահիտ Խաչիկի Ալոյան*** անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականիառաջին եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի գ. Ֆանտան 4-րդ փողոց թիվ 24 շինության տարածքում գտնվող առևտրի օբյեկտում տարածքում իրականացնելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք (Թույլտվություն N122):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Վ. Բարսամյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. հունվարի 29
Ք.Չարենցավան